ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 121-Ա

ԱՐԳԻՇՏԻ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 124-րդ հոդվածով, հիմք ընդունելով «2026 թվականի ընթացքում վարժական հավաքներ հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի հունվարի 8-ի թիվ 4-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Վայոց ձորի մարզի տարածքային ստորաբաժանման կողմից 2026 թվականի մայիսի 7-ին տրված N 783/Հր գրությունը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության «ՀՀ Վայոց ձորի մարզի Գողթանիկի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող Արգիշտի Նազարյանին 2026 թվականի մայիսի 8-ից ազատել աշխատանքային պարտականությունների կատարումից մինչև վարժական հավաքի ավարտը:
2. Արգիշտի Նազարյանի վարժական հավաքում գտնվելու ժամանակահատվածում նրա պարտականությունների կատարումը դնել նույն կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Կառլոս Աղաբաբյանի վրա:
3. Սույն որոշման գործողությունը տարածվում է 2026 թվականի մայիսի 8-ից հետո ծագող իրավահարաբերությունների վրա:

2026-05-12 16:08:17 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Վ. ԱՍԼԱՆՅԱՆ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

2026 թվականի մայիսի 12
ք. Եղեգնաձոր